ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0014, ք. Երևան, Հ.Ներսիսյան 10; հեռ. (0037410) 24-08-31; civ.yerevan@court.am

N ԴԴ Ա-8.2 Ե-81243/25

«23» դեկտեմբերի 2025թ.

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ,
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2025 թվականի պահպանման ծախսերի 4214 «Կապի ծառայություններ» հոդվածով, ըստ «Հայփոստ»ՓԲԸ-ի հետ 19.02.2025թ. կնքված թիվ PDU-121-01-25 պայմանագրի, 26.05.2025թ. լրացուցիչ թիվ 1, 09.09.2025թ. լրացուցիչ թիվ 2 և 23.12.2025թ. լրացուցիչ թիվ 3 համաձայանգրերի՝ մատուցվել է փոստային ծառայություններ: Ուստի խնդրում եմ Ձեր միջնորդությունը՝ վերոնշյալ ծառայությանների համար, 132 074 700 ՀՀ դրամ գումարի չափով տրված դրական եզրակացությանը ավելացնել 22 518 570 ՀՀ դրամ:

Գրությանը կցվում է «Հայփոստ» ՓԲԸ-ի և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից կնքված թիվ 3 լրացուցիչ համաձայնագրի պատճենը:

Առդիր՝ « 1 » թերթ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 3

19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-121-01-25
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան **23.12.2025թ.**

«ՀԱՅՓՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2025թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/261-25 Լիազորագրի հիման վրա, և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վարդան Վարդանյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-121-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից 132 074 700 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն յոթանասունչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 154 593 270 (մեկ հարյուր հիսունչորս միլիոն հինգ հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-121-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 544-444

Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար՝

Գուրգեն Բաղդասարյան ----------
/ստորագրություն/

Պատվիրատու՝

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի աշխատակազմ
ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011045318
Հեռ.՝ (010) 200-031

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝

Վարդան Վարդանյան ----------
/ստորագրություն/